ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն ***ԱՆՎՃԱՐ են***:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախնառաջ պետք է դիմեք «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ: «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ
Հաշտարար՝ ՓիրուզՍարգսյան
Գտնվելու վայրը՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացի15, «ԷլիտՊլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ
Հեռ.՝ 582 322, 582 321, Էլ. հասցե՝ info@fsm.am, Ֆաքս՝ 525 421, Կայք՝ www.fsm.am

*Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն **չի հրաժարվել** Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական բանկ
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6
Հեռ.՝ 592 697, Էլ. հասցե՝ chairman@cba.am, Ֆաքս՝ 565 496, Կայք՝ www.cba.am

Հարգելի՛ հաճախորդ, միաժամանակ հայտնումենք, որ եթե Ձեր և «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև **կնքվել է արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: